տութիւնից, բայց և այնպէս դեռ նրա պատիւն ու ինքնասիրութիւնը հաշուի չէր առնւում, անասնից մեծ չէր համարւում նրա հոգեկան յատկութիւնները և նրան փոխանակ՝ իբրև բանաւոր արարածի՝ խօսքով հասկացնելու իւր պարտքն ու իրաւունքը, հարկաւոր էր համարւում ծեծը, մտրակը գիւղական հրապարակներում և կային ծեր ազնուական հրապարակախօսներ (Мещерскій, Комаровъ), որոնք առանց մարմնական պատժի չէին կարողանում ըմբռնել ռուս գիւղացուն, որոնք կարծում էին, որ մտրակն ու մուժիկը միասին են ծնւում և միասին էլ պէտք է մեռնեն։

Թագաւոր Կայսեր ամենաողորմած հրամանով վերջապէս վերացուեց ռուս գիւղացու գլխին կախուած անպատուաբեր մտրակը և նա էլ վերջնականապէս ազատուեց խաւար ժամանակներից և ճորտութիւնից մնացած ժառանգութիւնից։ Նա երբէք չի մոռանայ, որ նորածին Թառանգի առաջին մանկական ճիչը առիթ եղաւ մարդասէր և գեղեցիկ քայլի և միշտ կաղօթի, որ նա զօրանայ և զարգանայ և նրա կեանքի ընթացքում յառաջադիմի և ծաղկի Ռուսաստանը մտաւորապէս և բարոյապէս, և հաստատուն քայլեր անի քաղաքացիական հաւասարութեան և ազատութեան ճանապարհի վրայ, և երբէք առիթ չունենայ խախտելու ընդարձակ Ռուսիոյ աշխատող ազգաբնակութեան բարգաւաճման համար այնքան անհրաժեշտ խաղաղութիւնը, և ներկայիս նման արով և արիւնով պաշտպանելու իւր քաղաքական շահերը։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Ա.

Թագաժառանգի ուրախառիթ ծննդեան առթիւ Վեհափառ Հայրապետն իւր ուղարկած շնորհաւորական հե-

ռագրի առթիւ բաղդ ունեցաւ ստանալու Թագաւոր Կայսրից հեռաւոր պատասխանը օգոստոսի 2-ին.

Մկրտիչ Առաջին Կաթուղիկոսի.

Ի սրտէ շնորհակալ եմ Ձեզ եւ հօտին Ձերոյ վասն աղօթից եւ արտայայտեալ զգացմանց։

ՆԻԿՈԼԱՑ

**

Վեհափառ Հայրապետի շնորհաւորական հեռագիրն էր հետեւեալը.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

ՆՈՐԻՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԹԱԳԱՒՈՐ ԿԱՑՍԵՐ.

Երջանկութեամբ սրտի հաւատի եղէ, զի Ամենակալն Աստուած պարգեւեալ է կայսերական Մեծութեան Ձերոյ և Թագուհի Կայսրուհւոյ Թագաժառանգ՝ Օգոստափառ Կայսերազն Ալէքսէյ Նիկալաեւիչ։ Առթիւ այսօրինակ բաղդաւոր դիպուածոյ վասն համայն Ռուսաստանի միաբանութիւն նախաթոռ վանուց Էջմիածնի ի Միածնաէջ տաճարի վերատաքնաց գոհացողական մաղթանս առ Բարձրեալն։

Համակեալ խոր զգացմամբ մեծի ուրախութեան, եւ՝ լուութեամբ հօտիս աղօթեմք առ Ամենաբարձրեալն, զի շնորհեսցէ Կայսերական Մեծութեան Ձերոյ և Նորին Մեծութեան Թագուհւոյ Կայսրուհւոյ և Օգոստափառ Կայսերազն Թագաժառանգի կեանս երկարս՝ յերջանկութիւն համայն Ռուսաստանի։

Կայսերական Մեծութեան Ձերոյ մնամ ջերմեռանդն աղօթարար Կաթուղիկոս ամենայն Հայոց ՄԿՐՏԻՉ Առաջին։

Ի 1-ն օգոստոսի 1904
Դիլիջան։

Բարձրագոյն հրամայուած է տօնել Նորին Կայսերական Բարձրութեան Ալէքսէյ Թագաժառանգի ծնունդը յուլիսի 30-ին, իսկ անուանակոչութիւնը հոկտեմբերի 5-ին։ Թագաժառանգի ծննդեան առթիւ երկիրս դոհացողական մաղթանք կատարուեց Ս. Էջմիածնայ տաճարում և հայոց բոլոր եկեղեցիներում։

Բ.

ԹԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Հայրապետական տնօրէնութիւնք.

Կոնդակ յանուն վարչութեան Հոդ. ճեմարանի Մայր Աթոռոյ, որով պատուիրեցաւ տալ Տ. Մամբրէ վարդապետի միանուագ դումար իբր պարգև վասն դասատուութեան ի հաշիւ ճեմարանի։ Թ. 495։

— Յանուն Սինոդի Ս. Էջմիածնի, որով պատուիրեցաւ տալ անդամոյ նորին Տ. Մակար եպիսկոպոսի եռամսեայ արձակուրդ ի գնալ ի հանքային ջուրս Կովկասու վասն բժշկութեան անձին։ Թ. 501.

— Նորին, ընդ որում յղեցան պատճէնք ի գրծոյ Հայրապետական Դիւանի՝ վերաբերելոյ բողոքանաց գծառայողաց վիճ. Կոնսիստ. հայոց Արցախայ։ Թ. 516։

— Յանուն վանահօր մենաստանին Սևանայ Գեր. Տ. Սարգիս եպիսկոպոսի, որով պատուիրեցաւ գնալ ի ծաբարակ գիւղն և օծել զնորակառոյց եկեղեցին գեղջն։ Թ. 518։

— Յանուն Հոդ. Կառավար. հայոց Ալէքսանդրապոլու, որով պատուիրեցաւ շարունակել զտուչութիւն քսան և հինգ ռուբլի ռոճկի Տ. Արսէն վարդապետի մինչ ցսեպտ. ամիսն տարւոյս։ Թ։ 531։